«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

# Այբբենարան

1-ին դասարան



# Այբբենարան



Բարև, արի՛ ծանոթանանք։ Մենք այս գրքի հերոսներն ենք և  քեզ կօգնենք ճամփորդել բառերի աշխարհում։ Միասին կսովորենք հայերեն կարդալ ու գրել։ Մեզ հետաքրքիր արկածներ ու հետաքրքիր նորություններ են սպասվում։  Ճամփա ընկանք։



Սս Աա Րր սար  *սար*

*ս ս ս*

*Ս Ս Ս*

*ա ա ա*

*Ա Ա Ա*

*ր ր ր*

*Ր Ր Ր*

*1. Կարդա՛ և գրի՛ր:* 

սար ______________________ ասա ______________________

սրա ______________________ արա ______________________

*2. Լրացրու՛ քեզ ծանոթ տառերը:*







*3.Գտի՛ր սար բառը և ներկի՛ր:*

մուկ

շուն

տուն

սար

***5. Բանաստեղծության մեջ Ա, ա տառերը ներկի՛ր կարմիր, Ս, ս-երը՝ դեղին, իսկ Ր, ր-երը՝ կապույտ գույնով:***

# Ամպն ու սարը





Ամպը եկավ նստեց սարին,
Նստեց սարի սուր կատարին:
— Լսի՛, պապի՛, ասավ նրան,
Լավ օրերդ անցան, կորան.

Խիստ սոսկալի
Ցուրտ է գալի:
Ասավ, գնաց:
Սարը կամաց
Մտավ սպիտակ

Վերմակի տակ:

***6. Նկարի՛ր բանաստեղծությունը:***

 տուն  տուն

Տտ Ուու Նն

տ տ տ

Ու Ու Ու

ու ու ու

Ու Ու Ու

ն ն ն

Ն Ն Ն



***1. Կարդա՛ և գրի՛ր:***

տուն ——————— տատ ———————

տուր ——————— տար ———————

սուր ——————— նրա ———————

սուր սար ———————————————

*2. Գտի՛ր տուն բառը և ներկի՛ր:*



տատ

սուր

սար

արա

տուր

տար

տուն

ասա

*3. Կարդա՛ և լրացրու՛ այն վանդակները, որոնց բնակիչները մեզ արդեն ծանոթ են:*











*4. Կարդա՛:*

նա  սա  տա  Արուս Աննա

ասա  արա  սրա  Սանասար Արա

տուն  տատ  տար  Արարատ

*5. Կազմի՛ր բառեր՝ ս, ա, ր, տ, ու, ն տառերով:*

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

*6. Մեծատառերը ներկի՛ր կարմիրով, իսկ փոքրատառերը ներկի՛ր դեղինով:*



*7. Նկարի՛ր քո տունը և  գրի՛ր տուն բառը:*

## Շ շ Ու ու Ն ն



շուն   շուն



շ շ շ

Շ Շ Շ

***1. Կարդա՛:***



նա, սա, ուս

աաա, նրա, շարան, սար, սուր

Արուս, Սուսան, Շուշան

ուշ, նուշ, շուն, աշուն

Աննա, Անուշ, Արա, Նշան

սուր սար, ուշ աշուն

***2. Կարդա՛ և գրի՛ր:***

շուն————————————  Արա————————————

շուշան————————————  Անուշ————————————

աշուն ————————————  Շուշան————————————

նուշ ————————————  Աննա————————————

շարան————————————  Սուսան————————————

ուշ աշուն————————————————————

սուր սար————————————————————

***3. Նկարի՛ր աշուն:***

**4. Կարդա՛ անունները և տեղադրի՛ր համապատասխան կողմում:**

Արուս, Աննա, Արարատ, Շուշան Ասատուր, Արա

________________________ ____________________________

________________________ ____________________________



________________________ ____________________________

________________________ ____________________________

**5. Կարդա՛ տրված բառերը և գրի՛ր:**

Սար, շուն, աշուն, նուշ, ասա, արա, սրա, սուր,

Աննա, Արա, Սուսան, Շուշան, Նշան, Նանա

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

6. ***Տրված տառերով / ս, ա, ր, տ, ու, ն, շ / կազմի՛ր բառեր և տուր թող ընկերդ կարդա՛:***

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________



Լ լ Ի ի Լ լ Ի ի

լուսին լուսին



լ լ լ

Լ Լ Լ

ի ի ի

ի ի ի

***1. Կարդա՛ և գրի՛ր:*** 

ուլ ______________ լու______________

լուր ______________ լար______________

իր ______________ իրեն______________

լուսին ______________ լուսան ______________

Ալլա______________ Աննա______________

Ալիսա______________ Ալինա______________

Իրինա______________ Արինա______________

Սարի ուսին սիրուն լուսին, սիրուն լուսին սարի ուսին:

*Սարի ուսին սիրուն լուսին, սիրուն լուսին սարի ուսին:*

______________________________________________

______________________________________________

*2. Գտի՛ր բառերն ու առանձնացրո՛ւ:*

սարշունաշունարաասուրԱննաԱրաՍուսանՇուշանՆշանՆանա:

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

*3. Ըստ օրինակի շարունակի՛ր:*



*4. Կարդա՛ տրված բառերը:*

Սար, սուր, տուր, տար, տարի, ասա, արա, սրա, տուն, շուն, աշուն, լուսին, Լալա, Ալինա, Աննա, Արա, Սուսան, Նշան, Շուշան, Նանա, Սասուն, Շարա, Լիանա, Արարատ

*5. Տրված տառերով / ս, ա, ր, տ, ու, ն, շ, լ, ի/ կազմի՛ր բառեր և տուր թող ընկերդ կարդա:*

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

________________________________________________________________________

*6. Միացրու՛ վանկերը և ստացիր բառեր:*

օր՝. ա-սա ասա

լու-սին ________________ ա-շուն ________________

սի-րուն ________________ լու-սան ________________

շու-շան ________________ շա-րան ________________

*7. Քեզ ծանոթ տառերը տեղադրի՛ր վանդակներում, կարդա՛ բառերը և ներկի՛ր նկարները:*







| | | |
|---|---|---|
| | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | |
|---|---|---|
| | | |

*8. Անցած տառերով բառեր նկարի՛ր* /ս, ա, ր, տ, ու, ն, շ, լ, ի/ **:**

Կ կ,   Մ, մ      Մ մ    Կ կ



կատու



մուկ

կ կ կ

Կ Կ Կ

մ մ մ

Մ Մ Մ

***1. Կարդա՛ և գրի՛ր:***



տուն____________________ տատ ____________________

տուր ____________________ տար ____________________

սուր ____________________ սար ____________________

կար____________________ կարաս____________________

տատիկ ____________________ տիկնիկ____________________

տակ ____________________ կատակ____________________

նկար____________________ կտուր____________________

սիրուն մասուր ________________________________________

սուր մատիտ ________________________________________

սիրուն լուսին ________________________________________

ուշ աշուն ____________________________________________

սուր կատակ __________________________________________

սիրուն նկար __________________________________________

*2. Կարդա՛ տրված բառերը:*

Սար, սուր, տուր, կար, տար, տարի, տուն, շուն, աշուն, մուկ, կատու, մատ, մատանի, մասուր, կարաս, լուսին, իլիկ, Լալա, Ալինա, Աննա, Արա, Սուսան, Նշան, Ալիկ, Շուշան, Նանա, Լիանա, Արարատ, Մանան

*3. Գրի՛ր նկարների բառերը:*



| | | | | | |
|---|---|---|---|---|---|



| | | | | |
|---|---|---|---|---|



| | | |
|---|---|---|



| | | | |
|---|---|---|---|

*4. Միացրու՛ վանկերը և ստացի՛ր բառեր:*

**օր՝. ա-սա  ասա**

լու-սին ____________________ա-շուն____________________

սի-րուն ___________________ լու-սան___________________

շու-շան ___________________ մա-սուր___________________

կա-տու____________________կա-րաս___________________

*5. Կարդա՛ շուտասելուկը:*

Մուկը մատը մատին կտա,

Տան կարասը պատին կտա:

*6. Կարդա՛ և ընդգծի՛ր մկնիկ և կատու բառերը:*

Մուկն ու կատուն

Մկնիկ, մկնիկ,

Շեկիկ-մեկիկ,

Կատո՛ւն, կատո՛ւն,

Տուտիկ կանի,

Ուտիկ կանի,

Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ…

Տուտիկ կանի,

Ուտիկ կանի,

Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ…

Կարդա՛ և լրացրո՛ւ բաց թողած տառերը:











Եե Եե



ես

ե ե ե

Ե Ե Ե

*1. Կարդա՛ և գրի՛ր:*



մեկ, մուկ, կետ________________________________________

կես, տաս, ես________________________________________

երես, ելակ, մետր______________________________________

տետր, երամ, երկու_____________________________________

աշուն, մկրատ, նամակ__________________________________

Արեն, Նարինե, Մարինե________________________________

Նարեկ, Կարեն, Արշակ__________________________________

Կարինե, Նարե, Ելենա___________________________________





**2.** *Գտի՛ր թաքնված բառը:*

սե, ուկմ, եկմ, ենԱր, կնար, լեակ, մսաին, կաուտ, կուեր

________________________________________________________

________________________________________________________

***3. Կարդա՛ և գրի՛ր:***

Անին ունի սիրուն տիկնիկ:

_______________________________________________

Ես ունեմ կարմիր մկնիկ:

_______________________________________________

Մարինեն ունի մեկ տիկնիկ:

_______________________________________________

***4. Վերևի շարքի վանկերը միացրո՛ւ ներքևի շարքի վանկերին և բառ ստացի՛ր:***

կա, լու, մա, Ա, ի, ե

լիկ, սին, տիտ, տու, նի, լակ

_______________________________________________

_______________________________________________

***5. Անցածդ տառերով բառեր կազմի՛ր:***

/ա, ս, ր, տ, ն, ու, ի, լ, ն, կ, մ, ե, շ/

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

***6. Նկարի՛ր քեզ:***

Նկարում ես եմ:



# Ծ ծ   Ո ո   Ռ ռ

## Ծառ   Տոնածառ

*ծ ծ ծ*

*Ծ Ծ Ծ*

*ո ո ո*

*Ո Ո Ո*

*ռ ռ ռ*

*Ռ Ռ Ռ*

***1. Կարդա՛ տրված բառերն ու բառակապակցությունները և գրի՛ր։***



ծառ, ծուռ, ծակ________________________________________

ծիտիկ, ծիածան, ծիծեռնակ ________________________________

որս, որակ, ռետին _____________________________________

մեծ ծառ ________________ մեծ ռետին _____________________

ծուռ տոնածառ_________________

ծակ կոշիկ____________________

*2. Կարդա՛ և գրի՛ր:*

Ես սիրուն ծիածան տեսա:

______________________________________________________________________

Անին ծակ կոշիկ ունի:

______________________________________________________________________

*3. Վանկերով կարդա՛ և գրի՛ր:*

Մա-տա-նի__________________, կար-կուտ _________________,

ար-մատ_____________,                ծի-տիկ_________________,

նա-մակ____________________,  մա-նուկ_____________,

սառ-նա-րան_________________________,

ծի-ծեռ-նակ________________________,

ծի-ա-ծան_________________________,

տո-նա-ծառ__________________________:

*4. Անցած տառերով կազմի՛ր բառեր և բառակապակցություններ:*

**ա, ս, ր, տ, ն, ու, կ, տ, շ, ի, լ, մ, ե, ո, ծ, ռ**

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

5. *Լրացրու՛ վանդակները և ներկի՛ր։*













*6. Նկարի՛ր բառեր, որ ապրում են ծ, ռ և ռ տառերի աշխարհում։*

# Ձմեռ պապ,  ձյուն   Ձձ  Յյ  Պպ



ձ ձ ձ

Ձ Ձ Ձ

պ պ պ

Պ Պ Պ

յ յ յ

Յ Յ Յ





*1. Կարդա՛ և գրի՛ր։*



ձի, ձու, ձուկ ____________________________________________

պար, պապ, պատ ________________________________________

ձմեռ, պարան, պանիր ____________________________________

ձմերուկ, ձյուն, ձայն ____________________________________

ռետին, առու, նուռ ______________________________________

տառ, ամառ, մառան ______________________________________

Ձմեռ պապ__________________ կարմիր նուռ__________________

սիրուն ամառ________________սիրելի պապիկ____________________

երկար տոնածառ______________________________

կարմիր տանձ ______________________________

*2. Վանկերը միացրու՛ իրար և ստացի՛ր բառեր։*

ա-ռու____________________պա-նիր______________________

պա-րան__________________պա-պիկ_____________________

կա-պիկ__________________կա-տու______________________

մա-ռան___________________ա-մառ______________________

մա-տիտ ___________________ռե-տին______________________

*3. Նախորդ առաջադրանքդ քեզ կօգնի։ Գտի՛ր համապատասխան վանկեր, միացրու՛ իրար և ստացի՛ր բառեր։*

կա, ա, պա, ձ, մա, տու, րան, ռան, նիր, պիկ, մեռ, ռու, մառ

____________________________________________________________

____________________________________________________________

____________________________________________________________

***4. Բարձրաձայն կարդա՛, ընդգծի՛ր այն տառը, որն անծանոթ է քեզ:***

Արի՛, արի՛
Ձմեռ պապի,
Սպիտա՛կ **հ**ա**գ**ի,
Սպիտա՛կ կապի:

***5. Անցածդ տառերով կազմի՛ր բառեր, բառակապակցություններ:***

ա, ս, ր, տ, ն, ու, շ, կ, ի, լ, ե, մ, ձ, ռ, յ, պ, ծ, ռ

________________________________________________________

________________________________________________________

***6. Քեզ ծանոթ տառերը տեղադրի՛ր վանդակներում, կարդա՛ բառերը և ներկի՛ր նկարները:***





| | |
|---|---|
| | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

| | | |
|---|---|---|
| | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |





| | | | |
|---|---|---|---|
| | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | դ |

## Փփ, Թթ

փաթիլ- *փաթիլ*



թիթեռ- *թիթեռ*



*թ թ թ*

*Թ Թ Թ*

*փ փ փ*

*Փ Փ Փ*

**1.Կարդա՛ և գրի՛:**

ափ, ութ, մութ, թութ________________________________________

կաթ, թանկ, փերի__________________________________________

թիթեռ, փաթիլ, թաթիկ ______________________________________

կաթիլ, փիսիկ, փափուկ______________________________________

***2. Գտի՛ր թաքնված բառը:***

աթփլի, ռեձմ, թլկաի, ռպաան, փփկուա, կպպաի, թթռիե, կափիի, կկապի, ութթկա

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

*3. Կարդա՛ և գրի՛ր:*

Թինան ունի երկար ու կարմիր մատիտ:

_______________________________________________

Ձմեռ Պապիկն ունի սիրուն թոռնիկ:

_______________________________________________

Անին ունի փափուկ փիսիկ:

_______________________________________________

*4. Վանկերը միացրու՛ և բառեր ստացի՛ր:*

փա, կա, փի, ձ, փե, թոռ, թի,

սիկ, թեռ, մեռ, թիլ, պիկ, նիկ, փուկ, րի

_______________________________________________

_______________________________________________

*5. Կազմի՛ր նախադասություն և գրի՛ր: Ուշադիր եղի՛ր, որ բոլոր տառերը անցած լինես:*

_______________________________________________

*6. Անցածդ տառերով կազմիր բառակապակցություններ:*

**ա, ս, ր, տ, ն, ու, կ, տ, շ, ի, լ, մ, ե, ձ, պ, ռ, փ, թ**

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

*7. Վանկերով կարդա՛ և գրի՛ր:*

փա-թիլ_______________________,　　　　　կա-թիլ___________________,

փի-սիկ_____________________,　　　　　թու-թակ________________________,

նա-պաս-տակ___________________________,

սառ-նա-րան___________________________,

թի-թեռ-նիկ ___________________________:

*8. Լրացրու՛ վանդակները:*





| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

*9. Կազմի՛ր բառակապակցություններ:*

փափուկ
______________________
______________________
______________________

սպիտակ
______________________
______________________
______________________